ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀԿԳՄՍՆ «Երևանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ-ի/այսուհետ՝ Քոլեջ/ «Մաթեմատիկա» - 1 դրույք, «Ֆիզիկա» - 0,5 դրույք, «Իրավունքի հիմունքներ» - 1 դրույք, «Պատմություն» - 1 դրույք, «Ապահովագրական գործ» - 1 դրույք, «Բանկային մարկետինգ» - 0.5 դրույք, «Ֆիզկուլտուրա» - 1 դրույք, «Թվային գրագիտություն և տեղեկատվական-հաղորդակցական գործիքներ» - 1 դրույք, «Մշակութային բազմազանություն և խուլերի համայնքի պատմություն և սոցիալական կառուցվածք» - 90 ժամ ծանրաբեռնվածությամբ առարկաների/մոդուլների դասախոսների թափուր տեղերի համար:

Վերոնշյալ թափուր տեղի համար կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝

- Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,
- Մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է ներքոնշյալ

փաստաթղթերը.

1. դիմում,
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. Անձնագիրը (բնօրինակը և պատճենը),
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 4),
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են 2026 թվականի օգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 04-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից մինչև 16:00:

Մրցույթը կկայանա 2026թ. սեպտեմբերի 09-ին և 10-ին, ժամը 13:00-ին՝ Քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010)23-99-91, (055)05-20-38 հեռախոսահամարներով: